



## Վանաձորի Օրհուս բնապահպանական տեղեկատվական կենտրոնի

2016 թ սեպտեմբեր ամսվա

գործունեության հաշվետվություն

*ք. Վանաձոր*

*2016թ, հոկտեմբերի 6*

Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության նպատակն է բարձրացնել տեղական կարողությունները բնապահպանական կառավարման հարցերի վերաբերյալ, ամրապնդել քաղաքապետարանի Տարեկան ծրագիրը և իրականացնել տեղական քաղաքացիական հասարակության և ոչ կառավարական շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից վերը նշված նպատակներին հասնելու ուղղությամբ 2016թ սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել է հետևյալ գործունեությունը:

22.09.2016թ. Կենտրոնի կողմից կազմակերպվել և իրականացվել է Վանաձոր համայնքում բնապահպանական խնդիրների քննարկում, որին մասնակցել են ՔՀԿ ներկայացուցիչներ և Կենտրոնի փորձագետների խորհրդի անդամներ: Քննարկման նպատակն է վեր հանել առկա հիմնախնդիրները և քննարկել դրանց լուծման մեթոդները: Բարձրացվեց համայնքում հատվա եղնինների հարցը, քննարկվեցին առաջիկայում իրականացվելիք քայլերը՝ կանաչապատ տարածքների պահպանության և ապագայում



հատումները բացառելու ուղղությամբ:

23.09.2016թ. կենտրոնի ներկայացուցիչը մասնակցել է Լոռու մարզի տարածքով կառուցվելիք բարձրավոլ էլեկտական հաղորդալարերի անցկացման բնապահպանական և սոցիալական ազդեցության նախագծի նախնական գնահատման հանրային լսմանը: Գնահատումն իրականացվել է Հայաստանի բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ պատվերով: Լսումների ընթացքում ներկայացվեցին ծրագրի բովանդակությունը, նշանակությունը, 400Կվ էլեկտրահաղորդման օդային գծի այլընտրանքային ծրագրերի վերլուծությունը, շրջակա միջավայրի վրա հիմնական ազդեցությունը և մեղմման միջոցառումները, սոցիալական հիմնական ազդեցությունը և մեղմման միջոցառումները, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, բողոքների լուծման մեխանիզմը, եղան առաջարկներ:

26.09.2016թ. Վանաձոր համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների ավագանու ցուցակներում թիվ 1 թեկնածուներին դիմել ենք հայտարարությամբ:  
Հայկական սամանադրական իրավապաշտպան կենտրոնի և Վանաձորի Օրհուս կենտրոնի այս նախաձեռնությունը, որին միացան նաև այլ ՔՀԿներ, ըստ էության 2 նպատակ է հետապնդում:

Առաջին՝ կուսակցությունների արդեն ստացվող պատասխանների օգնությամբ ավելի լավ կողմնորոշվել ընտրություն կատարելու հարցում և երկրորդ ու ամենակարևորը՝ հետագայում ավելի արդյունավետ համագործակցել արդեն ընտրված քաղաքապետի և ավագանիների հետ և օգնել նրանց քաղաքի բարձրացված հիմնախնդիրները լուծելու գործում:

Հայտարարությամբ հանդես գալուն նախորդել են քննարկումներ ՔՀԿների հետ, կազմվել է հայտարարության նախնական տեքստը, այնուհետև էլեկտրոնային նամակագրության միջոցով տեքստ բերվել է վերջնական տեքստի և հանձնվել է կուսակցություններին: Կազմվել է նաև մամլո հաղորդագրություն, որտեղ նշվել է նպատակը և հայտարարությունը:

ՔՀԿների կողմից բարձրացվել են համայնքային կարևորագույն հարցեր, այդ թվում նաև բնապահպանական և կանաչապատմանը վերաբերվող: Կից հավելված 1 ում ներկայացված են հայտարարության և մամլո հաղորդագրության պատճենները:

Կուսակցությունների պատասխանները ստանալուն պես դրանք կտեղադրվեն ֆեյսբուքյան Էկո Լոռի խմբում, ինչպես նաև կտեղադրվեն Օրհուս կենտրոնների կայքում՝ Հարցումների բաժնում:



## Հավելված 1 Վանաձորի ՔՀԿ ների հայտարարությունը

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 1 թեկնածու  
Սյծեմնիկ Հայկի Օհանյանին,  
«Լուսավոր Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 1 թեկնածու  
Քրիստ Հրաչիկի Մարությանին,  
«Համախմբում» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 1 թեկնածու  
Վահան Գարեգնի Ղույումյանին,  
«Հայ Ազգային Կոնգրես» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 1 թեկնածու  
Ռուբեն Մարիբեկի Ոսկանյանին,  
«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակի  
թիվ 1 թեկնածու Նելսոն Իվանի Մամուլյանին,  
«Հայաստանի Հանրապետական» կուսակցության ընտրական ցուցակի  
թիվ 1 թեկնածու Մամիկոն Լևուշի Ասլանյանին,  
«Հայկական վերածնունդ» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 1 թեկնածու  
Արկադի Լյովայի Փելեշյանին,  
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի թիվ 1  
թեկնածու Արամ Մայիսի Խաչատրյանին,

Մեծարգո տիկին և պարոնայք,

Վանաձոր համայնքում գործող քաղաքացիական հասարակության ներքոստորագրյալ կազմակերպությունների ներկայացուցիչներս մտահոգված քաղաքի բնակչության առջև ծառայած մարտահրավերներով, ավագանու ընտրությունների նախաշեմին Ձեզ ենք դիմում, խնդրելով՝

1. Հայտնել Ձեր և Ձեր կուսակցության դիրքորոշումը ստորև ներկայացվող հիմնախնդիրների վերաբերյալ:
2. Ավագանու անդամ և այնուհետև՝ Վանաձորի քաղաքապետ ընտրվելու դեպքում ինչպիսի՞ քայլեր կձեռնարկեք.
  - 2.1. Քաղաքի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ մասնավորապես, կարո՞ղ եք արդյոք.
    - կրճատել քաղաքապետարանի ուռճացած աշխատակազմը և քանի՞ տոկոսով,
    - Վանաձորի բնակիչների շահը վեր դասել Ձեր կուսակցության և Ձեր անձի, Ձեր ընտանիքի, հարազատների, ընկերների ու մտերիմների շահերից,
    - բացառել համայնքի ունեցվածքը, գույքը անձնակազմի կամ կուսակցական նպատակներով օգտագործելուց անձամբ Ձեր և Ձեզ ենթակա պաշտոնյաների կողմից:
  - 2.2. Քաղաքում գործազրկության մակարդակի նվազեցման և նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ:
  - 2.3. Քաղաքում աղքատության մակարդակը կրճատելու ուղղությամբ:
  - 2.4. Վանաձորից արտագաղթած բնակչության վերադարձը խրախուսելու համար:
  - 2.5. Քաղաքի կանաչ տարածքները վերականգնելու, քաղաքամերձ հանքերի շահագործումը դադարեցնելու և բնապահպանությանը սպառնացող վտանգները կանխելու ուղղությամբ:
  - 2.6. Քաղաքի ճարտարապետական դիմագիծը խաթարող կառույցները ապամոնտաժելու, բնակֆոնդի և հասարակական կառույցների սեյսմակայունությունը ամրապնդելու և Շիրակացու փողոցի կիսակառույց էստակադան վերականգնելու ուղղությամբ:

2.7. Երիտասարդ ընտանիքներին խրախուսելու և ծնելիությունը խթանելու արդյունավետ ծրագրեր ներդնելու ուղղությամբ:

2.8. ՔՀԿ-երի հետ համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

Խնդրում ենք Ձեր դիրքորոշումը և նշված հարցերի վերաբերյալ պատասխանները մինչև 2016թ. սեպտեմբերի 28-ը ներկայացնել ՀՄԻԿ ՀԿ գրասենյակ (Շիրակացու 1-ին նրբ. թիվ 2, հեռ. 2-29-67, 091 200 965, էլ. հասցե՝ [acrpc@acrpc.am](mailto:acrpc@acrpc.am)), կամ Օրհուս կենտրոն (Գրիգոր Լուսավորիչի փող. թիվ 47, թիվ 6-րդ դպրոց, 2-րդ հարկ, հեռ. 077 723 388, էլ. հասցե՝ [bojukyap@mail.ru](mailto:bojukyap@mail.ru)):

Մաղթում ենք ազատ և արդար ընտրություններ:

Հարգանք՝

Գևորգ Մանուկյան

Միջազգային փոփոխության

Պերճ Բոցուկյան

*Գ.Մ.*

ՀՄԻԿ ՀԿ նախագահ

*Սր. Գր. Աբրահամյան*

Վանաձորի Օրհուս բնապահպանական

տեղեկատվական հասարակական կենտրոնի համակարգող

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*24.09.16թ.*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*24.09.16թ. Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

*Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան Պարզաբան*

